

ՄԻՇԷԼ ԶԵՅԹՈՒՆԿԱՆ



ԳԻՏՈՒԹԻՒՆ

Գ. ՏԱՐԻ

ՄԻՇԷԼ ԶԷՅԹՈՒՆԼԵԱՆ

ԳԻՏՈՒԹԻՒՆ

Գ. ՏԱՐԻ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

«ՀԱՄԱԶԳԱՅԻՆ» ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Copyright © HAMASKAÏNE
All rights reserved



ՀԱՄԱՂԳԱՅԻՆԻ ՎԱՀԷ ՍԵԹԵԱՆ ՏՊԱՐԱՆ

ՄԻԱՅԵԱԿ ԶԵՌՆԱՐԿ
ԼԻՔԱՆԱՆԻ ԹԵՄԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՈՐԳԻ
ԵՒ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1— Լոյս	7
2— Ելեկտրականութիւն	16
3— Զայն	27
4— Պատնառ եւ հետեւանք	35
5— Մարդկային մարմինը	37
6— Բոյսին անումը եւ բազմացումը	55
7— Տերեւներու դասաւորում	66
8— Օդը	69
9— Տիեզերքը եւ երկիրը	75
10— Զերմութիւն եւ ջեռուցում	85
11— Կենսուժի սպառում	93
12— Անասուններու ինքնապաշտպանութիւնը	96

ՅԱՌԱԶԱԲԱՆ

Բնական երեւոյթ է փոքրիկներուն մօտ խուզարկելու միտք եւ հետաքրքրութիւն ունենալը իրենց անմիջական շրջապատին հանդէպ: Այս երեւոյթին գոհացում տալու, ինչպէս նաեւ յղկելու համար անոնց նաշակը, պէտք է գարգացնել զանոնք դիտելու կարողութիւնը եւ ուղղել անոնց միտքը, որպէսզի ընեն նիշդ վերլուծումներ եւ հասնին նիշդ արդիւնքներու:

Այս նպատակը իրագործելու համար անհրաժեշտ է ունենալ ուսուցման անհրաժեշտ միջոցները, որոնց առաջինը դասագիրքն է, պայմանաւ որ դասագիրքերը պատրաստուած ըլլան մանկավարժական աշխատանքին եւ գիտութեան ծրագրին ամբողջական նպատակներուն գոհացում տալու ձգտումով:

Մեկնելով այս մտահոգութենէն՝ այս դասագիրքի պատրաստութեան առթիւ ամէն նիգ ի գործ դրուած է, որպէսզի պարզ ու հասկնալի ըլլալու կողմին՝ ան ըլլայ նաեւ հանելի, անոր նիւթերը աշակերտին հրամցուին գիտական ու գործնական պարզաբանուած մօտեցումով եւ օժտուած ըլլան նոր, ինքնատիպ ու նոյս պատկերազարդումով:

Մանկավարժական վերոյիշեալ նպատակները իրագործելու համար յենած եմ փորձառութեանս, ինչպէս նաեւ այն զազափարին, գոր վաստակաւոր ուսուցիչ պրն. Հրաչ Տասնապետեան յայտնած է իր դասագիրքերու շարքին յառաջաբանին մէջ. — «Զենք հաւատար տնային աշխատանքի մը հնարաւորութեան եւ անհրաժեշտութեան՝ ճէն 10 տարեկան տղոց համար, երբ այնքա՛ն բնական ու հասկնալի է խաղին պահանջը: Հետագային, նախակրթարաններու վերջին դասարաններուն մէջ, կարելի է աւելի խստապահանջ ըլլալ՝ տնային պատրաստութեան նկատմամբ»:

Այս իրականութենէն ու համոզումէն մեկնելով՝ նիւթին ուսուցման համար նկատի առնուած են.

— դասին ներկայացումը՝ հարցումներով, որոնք կը համապատասխանեն մտային կարողութեան.

— տրամաբանութեան զարգացումը, որ կ'իրացուի բազդատութիւններով եւ փորձերով:

Այս գիրքին դասերը (որոնց 5րդը իր կարգին ունի հինգ բաժիններ) կը ներկայացնեն մանուկին ապրած նիւթական աշխարհին ու իր առօրեայ կեանքին հետ կապ ունեցող կարգ մը գիտական իւրողութիւններ, որոնք կը պարզուին հիմնուելով գիտական մտապատկերներու եւ գաղափարներու վրայ եւ որոնք կը համապատասխանեն իր տարիքին ու մտային կարողութեան: Մանուկը կը ծանօթանայ քայլ առ քայլ իր շրջապատին: Կը ներկայացուին բազմաթիւ բնական երեւոյթներ, որոնք կը բացատրուին հետախուզութիւններու ու փորձերու կատարումով:

Այս հատորին հրատարակութեան առիթով շնորհակալական խօսք կ'ուղղեմ.

ա.— Պրն. Հրաչ Տասնապետեանին, որուն դասագիրքերը տասնամեակներ շարունակ իբրեւ ուղեցոյց եւ դասագիրք ծառայեցին մեր ուսուցիչներուն եւ աշակերտներուն. անոնցմէ օգտուեցայ ինքս ալ այս շարքի պատրաստութեան համար (կարգ մը գլուխներ մօտաւոր վերարտադրութիւններ են, ինչպէս նաեւ կարգ մը նկարներ):

բ.— Օրիորդ Վարդուհի Անդոյեանին, որուն հետ մշակեցի այս հատորին նիւթերու շարքը:

գ.— Պրն. Երուանդ Մոնոփարեանին, որուն աշխատանքով այս հատորը իր նախնական ձեւաւորումէն ու պատրաստութենէն վերածուեցաւ ներկայի իր ամբողջական ու ներկայանալի գիրքի վիճակին:

դ.— Ազգային Ուսումնական Խորհուրդին եւ Համագգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան Կեդրոնական Վարչութեան, որոնք ազնիւ գաղափարը յղացած են հրատարակելու գիտութեան հայերէն դասագիրքերու այս շարքը:

Մ. Զ.